կունքն և այլք միաբանքն յուր և իւրեք՝ ի շրջելն ըստ սովորութեան իւրեանց ֆէօղա-ղիխ[1]), քաղղիխ[2]), ռահդարք, մի մերձենային ի յինչս և ի քսուրս նոցա, և մի ինչ պահանջեսցեն. նոյնպէս և յուխտաւորացն Էջմիածնի մի ոք զիր ինչ պահանջեսցէ: Մեատաններորդն՝ թէ չափարք մի իշխեսցեն առնուլ զհիս ի Էջմիածնի մարդկանցն: Երկոտասաներորդն՝ թէ տաճիկ և թէ Հայք, մի ոք իշխեսցէ յանդս, և ի յայգեստեղիս, և յայլս տեղիս Էջմիածնի զսերմն սերմանել և կամ յափշտակել: Երեքտասաներորդն՝ թէ Յօշականու գետոյ ջրոյն կէսն Էջմիածնի է, և կէսն միւս գիւղօրէից՝, հաստատեցեալ ի բնէ անտի ռազամօք թագաւորաց, նոյնպէս և լիցի միշտ: Չորեքտասաներորդն՝ թէ Էջմիածնի միաբանքն ի բնէ անտի մազաֆք են ռազամօք թագաւորաց և ելեալք ի զալամից, որք ոչ ինչ պարտին տալ ումեք: Արդ ի յայս չորեքտասան խնդիրս, ի վերջ իւրաքանչիւրոցն գրէ յատուկ յատուկ պատուէր և սաստիկ թամպէհ իշխողաց, միրզայից և այլոց գործակալաց, զի յայսոսիկ հրամանս կատարեսցեն անպակաս: Եւ մանաւանդ ի յիւրաքանչիւրսն եւս գրէ թէ՝ որպէս ունին և զռազամս ի թագաւորաց: Լինի այս ի ՌՃՀԳ. թուին տաճկաց: Գիտցուցակաւն:

Արդ ուրեմն մտածեա դու զպիտանաւորութիւն և զշահաւետութիւն թղթոյս այսորիկ և լաւապէս պահեա: Զի թէ տուողն չէ թագաւոր, սակայն վկայէ թէ՝ այսպէս են լեալ ի բնէ, և ունին և զռազամ ի թագաւորաց: Եւ մանաւանդ եթէ Աստուած տայցէ զթագաւոր, կարես ըստ այսմ օրինակի և ի թագաւորէն առնուլ՝ որպէս մեք առաք ի թագաւորապէս իշխող Քեարիմ Խանէն, զորմէ յետոյ տեսցես»:

Ճամախեցի Յակոբ կաթուղիկոսը գրել էր և զանազան գրքեր, որոց մէկն է «Գիրք ապօթից որ կոչի Հայոց նեղելոց», որ տպուած է ի Կոստանդնուպօլիս —յամի Տեառն 1760, եւ Հայոց 1209. ի տպարանի Աստուածատուրի, որոյ համար գրքի ճակատին գրած է. «Ջարդրեցեալ ի Յակոբայ Արհի եպիսկոպոսէ Ճամա-

[1])Մաքսապետք —[2])Պահապանք: